

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի հունվարի 14-ի

2008/122/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող, վերավաճառքի եւ փոխանակման պայմանագրերի որոշ հայեցակետերի հետ կապված սպառողների պաշտպանության մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը ⁽¹⁾,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն ⁽²⁾,

քանի որ՝

- 1) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 26-ի «Անշարժ գույքի տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրերի որոշ հայեցակետերի հետ կապված գնորդների պաշտպանության մասին» ⁽³⁾

⁽¹⁾ ՊՏ C 44, 16.02.2008թ., էջ 27:

⁽²⁾ Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս հրապարակված չէ) եւ Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում:

⁽³⁾ ՊՏ L 280, 29.10.1994թ., էջ 83:

94/47/ԵՀ հրահանգի ընդունումից հետո ձեւավորվել է տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքը, եւ շուկայում հայտնվել է արձակուրդի համանման նոր արտադրանք: Արձակուրդի այդ նոր արտադրանքը եւ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի, օրինակ՝ վերավաճառքի պայմանագրերի եւ փոխանակման պայմանագրերի հետ կապված որոշ գործարքներ չեն կարգավորվում 94/47/ԵՀ հրահանգով: Բացի այդ, 94/47/ԵՀ հրահանգի կիրառման հետ կապված փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ է թարմացնել կամ պարզաբանել արդեն իսկ կարգավորվող որոշ հարցեր՝ սույն հրահանգը շրջանցելուն միտված արտադրանքի մշակումը կանխելու համար,

- 2) կարգավորման առկա բացերը ստեղծում են մրցակցության զգալի խեղաթյուրումներ եւ սպառողների համար առաջացնում են լուրջ խնդիրներ՝ այդպիսով խոչընդոտելով ներքին շուկայի անխափան գործունեությունը: Ուստի 94/47/ԵՀ հրահանգը պետք է փոխարինվի նոր՝ թարմացված հրահանգով: Քանի որ զբոսաշրջությունն օրըստօրե ավելի կարեւոր դեր է խաղում անդամ պետությունների տնտեսություններում, ապա որոշակի ընդհանուր կանոնների ընդունմամբ պետք է խրախուսվի տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքի եւ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքի բնագավառներում ավելի մեծ աճը եւ արտադրողականությունը,
- 3) իրավական որոշակիությունը բարձրացնելու եւ սպառողների ու բիզնեսի կողմից ներքին շուկայի առավելություններից լիարժեք օգտվելը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է հետագայում մոտարկել անդամ պետությունների համապատասխան օրենքները: Ուստի շուկայավարման, տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքի եւ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքի վաճառքի եւ վերավաճառքի որոշ հայեցակետեր, ինչպես նաեւ տարաժամկետ

(Ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրերից բխող իրավունքների փոխանակումը պետք է ամբողջովին ներդաշնակեցվեն: Անդամ պետություններին չպետք է թույլատրվի իրենց ազգային օրենսդրությունում պահպանել կամ ներմուծել սույն հրահանգով սահմանված դրույթներից շեղվող դրույթներ: Այդպիսի ներդաշնակեցված դրույթներ գոյություն չունենալու դեպքում անդամ պետությունները պետք է ազատ լինեն պահպանելու կամ ներմուծելու ազգային օրենսդրություն՝ Համայնքի օրենսդրությանը համապատասխան: Այսպիսով, անդամ պետությունները պետք է կարողանան, օրինակ, պահպանել կամ ներմուծել սույն հրահանգի շրջանակից դուրս գտնվող իրավական հարաբերություններում պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելու հետեւանքների մասին դրույթներ, կամ դրույթներ, որոնց համաձայն, սպառողի եւ տարածամկետ (Ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքի կամ երկարածամկետ արձակուրդի արտադրանքի մասով առեւտրային գործունեություն իրականացնողի միջեւ որեւէ պարտավորություն չի կարող ստանձնվել, ինչպես նաեւ այդ անձանց միջեւ չի կարող կատարվել որեւէ վճարում, քանի դեռ սպառողը չի կնքել վարկային պայմանագիր այդ ծառայությունների գնումը ֆինանսավորելու համար,

4) սույն հրահանգը չպետք է սահմանափակի անդամ պետությունների կողմից Համայնքի օրենսդրությանը համապատասխան սույն հրահանգի դրույթների կիրառումն այն ոլորտներում, որոնք ընդգրկված չեն հրահանգի շրջանակներում: Հետեւաբար անդամ պետությունները կարող են պահպանել կամ ներմուծել սույն հրահանգի դրույթներին կամ սույն հրահանգով չկարգավորվող գործարքների մասին որոշ դրույթների համապատասխանող ազգային օրենսդրություն,

5) սույն հրահանգով կարգավորվող տարբեր պայմանագրեր պետք է հստակորեն սահմանվեն այնպես, որ բացառվի դրա դրույթների շրջանցման հավանականությունը,

- 6) սույն հրահանգի նպատակներից ելնելով՝ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրերը չպետք է ընկալվեն որպես պայմանագրեր, որոնք ընդգրկում են կացարանի բազմակի ամրագրումներ, ներառյալ՝ հյուրանոցի սենյակները, քանի դեռ բազմակի ամրագրումները չեն ենթադրում առանձին ամրագրումներից բխող իրավունքներից եւ պարտավորություններից զատ այլ իրավունքներ եւ պարտավորություններ: Տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրերը չպետք է նաեւ ընկալվեն որպես լիզինգի սովորական պայմանագրեր, քանի որ վերջիններս վերաբերում են գույքի զբաղեցման ոչ թե բազմաթիվ, այլ մեկ չընդհատվող ժամանակահատվածի,
- 7) սույն հրահանգի նպատակներից ելնելով՝ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրերը չպետք է ընկալվեն որպես հավատարիմ սպառողների համար նախատեսված սովորական ծրագրեր ներառող պայմանագրեր, որոնք զեղչեր են տրամադրում հետագայում հյուրանոցային ցանցի հյուրանոցներում մնալու համար, քանի որ ծրագրին անդամակցությունը ձեռք չի բերվում վճարի դիմաց, եւ վճարը սպառողի կողմից չի վճարվում հիմնականում կացարանի հետ կապված զեղչեր կամ այլ առավելություններ ստանալու նպատակով,
- 8) սույն հրահանգը չի ազդում Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի «Ճամփորդական փաթեթի, արձակուրդային փաթեթի եւ ուղեւորության փաթեթի մասին» 90/314/ԵՏՀ հրահանգի վրա⁽¹⁾,
- 9) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» 2005/29/ԵՀ հրահանգով (Անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի մասին հրահանգ) ⁽²⁾

⁽¹⁾ ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 59:

⁽²⁾ ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22:

արգելվում են մոլորեցնող, ագրեսիվ բնույթի եւ սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առետրային այլ գործելակերպեր: Հաշվի առնելով արտադրանքի բնույթը եւ տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքին եւ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին, վերավաճառքին եւ փոխանակմանը վերաբերող առետրային գործելակերպերը՝ անհրաժեշտ է ընդունել ավելի մանրամասն եւ կոնկրետ դրույթներ տեղեկատվության պահանջների եւ վաճառքի միջոցառումների մասին: Վաճառքի միջոցառումների մասով հրավերների առետրային նպատակը պետք է պարզաբանվի սպառողին: Պայմանագրի կնքմանը նախորդող փուլում տրամադրվող տեղեկություններին եւ պայմանագրին վերաբերող դրույթները պետք է հստակեցվեն եւ թարմացվեն: Որպեսզի սպառողներին նախքան պայմանագիրը կնքելը տեղեկություններին ծանոթանալու հնարավորություն ընձեռվի, դրանք պետք է տրամադրվեն նրանց համար այդ պահին հեշտ հասանելի միջոցներով,

- 10) սպառողները պետք է ունենան պայմանագրի կնքմանը նախորդող փուլում տրամադրվող տեղեկությունները եւ պայմանագիրն իրենց կողմից ընտրված այն լեզվով ստանալու իրավունք, որին ծանոթ են, որը չպետք է մերժվի առետրային գործունեություն իրականացնողների կողմից: Բացի այդ, պայմանագրի կատարումը եւ իրականացումը պարզեցնելու նպատակով անդամ պետություններին պետք է թույլատրվի որոշել, որ պայմանագրի հետագա լեզվական տարբերակները պետք է տրամադրվեն սպառողներին,
- 11) սպառողներին՝ պայմանագրով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները լիարժեք ըմբռնելու հնարավորություն ընձեռելու համար նրանց պետք է տրամադրվի ժամանակ, որի ընթացքում նրանք կարող են հրաժարվել պայմանագրի կատարումից՝ ստիպված չլինելով հիմնավորել պայմանագրի կատարումից հրաժարվելը եւ չկրելով որեւէ ծախս: Ներկայումս այդ ժամանակահատվածի տեւողությունը տարբեր է

անդամ պետություններում, եւ փորձը ցույց է տալիս, որ 94/47/ԵՀ հրահանգով սահմանված տեղողությունը բավականաչափ երկար չէ: Ուստի ժամանակահատվածը պետք է երկարաձգվի սպառողների պաշտպանության բարձր մակարդակ եւ սպառողների ու առևտրային գործունեություն իրականացնողների համար առավել հստակություն ձեռք բերելու նպատակով: Ժամանակահատվածի տեղողությունը, պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքի իրացման եղանակները եւ հետեւանքները պետք է ներդաշնակեցվեն,

- 12) սպառողները պետք է ունենան պաշտպանության արդյունավետ միջոցներ այն դեպքում, երբ առևտրային գործունեություն իրականացնողները չեն ապահովում պայմանագրի կնքմանը նախորդող փուլում տրամադրվող տեղեկություններին կամ պայմանագրին վերաբերող դրույթների կատարումը, մասնավորապես այն դրույթների, որոնցով սահմանվում է, որ պայմանագիրը պետք է պարունակի պահանջվող ողջ տեղեկատվությունը, եւ որ սպառողը պետք է ստանա պայմանագրի պատճենը այն կնքելու պահին: Ի հավելումն ազգային օրենսդրության համաձայն գործող պաշտպանության միջոցների՝ սպառողները պետք է օգտվեն պայմանագրի կատարումից հրաժարվելու երկարաձգված ժամկետից այն դեպքում, երբ տեղեկությունները չեն տրամադրվել առևտրային գործունեություն իրականացնողների կողմից: Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելն այդ երկարաձգված ժամանակահատվածում պետք է անվճար լինի, անկախ նրանից, թե ինչ ծառայություններից են օգտվել սպառողները: Պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածի լրանալը սպառողներին չի խանգարում ազգային օրենսդրությանը համապատասխան օգտվել տեղեկատվության պահանջների խախտումների համար նախատեսված պաշտպանության միջոցներից,

- 13) ժամանակահատվածների, ամսաթվերի եւ ժամկետների⁽¹⁾ նկատմամբ կիրառելի կանոններ սահմանող՝ Խորհրդի 1971 թվականի հունիսի 3-ի թիվ 1182/71 (ԵՏՀ, Եվրատոմ) կանոնակարգը պետք է կիրառվի սույն հրահանգում պարունակվող ժամկետները հաշվարկելու համար,
- 14) նախքան պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածի ավարտը առետրային գործունեություն իրականացնողների կամ որեւէ երրորդ կողմի կանխավճարներ վճարելու արգելքը պետք է պարզաբանվի սպառողների պաշտպանությունը բարելավելու նպատակով: Վերավաճառքի պայմանագրերի դեպքում կանխավճարի արգելքը կիրառվում է մինչեւ փաստացի վաճառքի իրականացումը կամ վերավաճառքի պայմանագրի գործողության դադարեցումը, սակայն անդամ պետությունները պետք է ազատ լինեն՝ կարգավորելու միջնորդներին կատարվող վերջնական վճարումների հնարավորությունը եւ եղանակները վերավաճառքի պայմանագրերի գործողությունը դադարելուց հետո,
- 15) երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրերի դեպքում փուլային վճարման ժամանակացույցի համատեքստում վճարման ենթակա գումարի մասով կարելի է հաշվի առնել այն հավանականությունը, որ առաջին տարվանից հետո կարող են ճշգրտվել հետագա գումարները՝ ապահովելու համար այդ հերթական վճարումների իրական արժեքը, օրինակ՝ հաշվի առնելով գնաճը,
- 16) այն դեպքում, երբ սպառողը հրաժարվում է պայմանագրի կատարումից, եթե գինն ամբողջությամբ կամ մասամբ վճարված է առետրային գործունեություն իրականացնողի կամ երրորդ կողմի կողմից սպառողին տրամադրված վարկի միջոցով՝ այդ երրորդ կողմի եւ առետրային գործունեություն իրականացնողի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, ապա վարկային համաձայնագրի գործողությունը պետք է դադարեցվի՝ առանց սպառողի կողմից որեւէ ծախս

(¹) ՊՏ L 124, 08.06.1971թ., էջ 1:

կրելու: Նույնը պետք է կիրառվի երրորդ կողմի եւ առետրային գործունեություն իրականացնողի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա առետրային գործունեություն իրականացնողի կամ այդ երրորդ կողմի կողմից մատուցվող հարակից այլ ծառայությունների մասով պայմանագրերի նկատմամբ,

- 17) սպառողները չպետք է զրկվեն սույն հրահանգով տրամադրվող պաշտպանությունից, եթե պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրությունը որեւէ անդամ պետության օրենսդրություն է: Պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրությունը պետք է որոշվի միջազգային մասնավոր իրավունքի մասին Համայնքի կանոններին, մասնավորապես՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի հունիսի 17-ի «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» (Հռոմ I) ⁽¹⁾ թիվ 593/2008 կանոնակարգին (ԵՀ) համապատասխան: Նշված կանոնակարգի համաձայն՝ երրորդ երկրի օրենսդրությունը կարող է կիրառվել, մասնավորապես, եթե առետրային գործունեություն իրականացնողների կողմից սպառողները թիրախավորվում են այն երկրում արձակուրդն անցկացնելիս, որը չի հանդիսանում իրենց բնակության երկիրը: Հաշվի առնելով, որ առետրային այդպիսի գործելակերպերը տարածված են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում, եւ որ պայմանագրերը ներառում են զգալի չափով գումարներ, որոշակի իրավիճակներում պետք է տրամադրվի լրացուցիչ պաշտպանություն, մասնավորապես, եթե անդամ պետության դատարանները պայմանագրի նկատմամբ ունեն իրավազորություն՝ ապահովելու, որ սպառողը չզրկվի սույն հրահանգով տրամադրվող պաշտպանությունից: Սույն հայեցակարգն արտացոլում է սպառողների պաշտպանության կոնկրետ կարիքները, որոնք բխում են սույն հրահանգի շրջանակով կարգավորվող պայմանագրերին բնորոշ բարդությունից, երկարաժամկետ բնույթից եւ ֆինանսական նշանակությունից,

(¹) ՊՏ L 177, 04.07.2008թ., էջ 6:

- 18) Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի «Քաղաքացիական եւ առեւտրային գործերով իրավասության եւ վճիռների ճանաչման եւ կատարման մասին» թիվ 44/2001 (ԵՀ) կանոնակարգի (1) համաձայն պետք է որոշվի, թե որ դատարաններն իրավասություն ունեն այն վարույթներում, որոնց առարկան սույն հրահանգով կարգավորվող հարցերը են,
- 19) ապահովելու համար, որ մասնավորապես եւ՛ պայմանագրի կնքմանը նախորդող փուլում, եւ՛ պայմանագրի գործողության ընթացքում առեւտրային գործունեություն իրականացնողների կողմից տեղեկատվության պահանջներին համապատասխանության մասով սույն հրահանգով սպառողներին տրամադրվող պաշտպանությունը լինի լիովին արդյունավետ, անհրաժեշտ է, որ անդամ պետությունները սույն հրահանգի խախտումների համար սահմանեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներ,
- 20) անհրաժեշտ է ապահովել, որ այն անձինք կամ կազմակերպությունները, որոնք, ազգային օրենսդրության համաձայն, օրինական շահեր ունեն տվյալ հարցում, իրավական պաշտպանության միջոցներ ունենան սույն հրահանգի խախտումների դեմ վարույթ հարուցելու համար,
- 21) անդամ պետություններում անհրաժեշտ է մշակել պաշտպանության միջոցների համապատասխան եւ արդյունավետ ընթացակարգեր սպառողների եւ առեւտրային գործունեություն իրականացնողների միջեւ վեճերը լուծելու համար: Այս նպատակով անդամ պետությունները պետք է խրախուսեն պետական կամ մասնավոր մարմինների ստեղծումը՝ վեճերն արտադատական կարգով լուծելու համար,
- 22) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ սպառողներն արդյունավետ կերպով տեղեկացվեն սույն հրահանգը փոխատեղող ներպետական օրենսդրության մասին, եւ խրախուսեն առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ վարքագծի կանոնագրքի

(1) ՊՏ L 12, 16.01.2001թ., էջ. 1:

հեղինակներին այս բնագավառում սպառողներին իրենց վարքագծի կանոնագրքերի մասին տեղեկացնելու հարցում: Սպառողների՝ բարձր մակարդակի պաշտպանությունն ապահովելու նպատակով սպառողների կազմակերպությունները կարող են տեղեկացվել եւ ներգրավվել վարքագծի կանոնագրքեր կազմելու գործերում,

- 23) քանի որ սույն հրահանգի նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից եւ հետեւաբար ավելի արդյունավետորեն կարող են իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է ներքին շուկային սպառնացող խոչընդոտները վերացնելու եւ սպառողների՝ ընդհանուր բարձր մակարդակի պաշտպանությունն ապահովելու համար,
- 24) սույն հրահանգը հարգում է այն հիմնարար իրավունքները եւ պահպանում այն սկզբունքները, որոնք մասնավորապես ճանաչվել են Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայով եւ Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայով,
- 25) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին¹ համապատասխան՝ խրախուսվում է, որ անդամ պետությունները, իրենց եւ Համայնքի շահերից ելնելով, կազմեն սույն հրահանգի եւ իրենց փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակները եւ հրապարակեն դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

(¹) ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

*Հոդված 1***Նպատակը եւ գործողության շրջանակը**

1. Սույն հրահանգի նպատակն է նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը եւ հասնել սպառողների պաշտպանության բարձր մակարդակի՝ մոտարկելով շուկայավարմանը, տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքի վաճառքին եւ վերավաճառքին եւ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքների որոշ հայեցակետերին վերաբերող անդամ պետությունների օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները, ինչպես նաեւ փոխանակման պայմանագրերը:

2. Սույն հրահանգը կիրառվում է առետրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ իրականացվող գործարքների նկատմամբ:

Սույն հրահանգը չի հակասում ազգային օրենսդրությանը, որը՝

- ա) նախատեսում է ընդհանուր պայմանագրային իրավունքի պաշտպանության միջոցներ,
- բ) վերաբերում է անշարժ կամ շարժական գույքի գրանցմանը եւ անշարժ գույքի տիրապետման իրավունքի հանձնմանը,
- գ) վերաբերում է հիմնադրման կամ թույլտվության ռեժիմների պայմաններին կամ լիցենզիայի տրամադրման պահանջներին, եւ
- դ) վերաբերում է այն իրավունքների իրավական բնույթի սահմանմանը, որոնք հանդիսանում են սույն հրահանգով կարգավորվող պայմանագրերի առարկան:

Հոդված 2

Սահմանումները

1. Սույն հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.
 - ա) «տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագիր» նշանակում է մեկ տարվանից ավելի գործողության ժամկետ ունեցող պայմանագիր, համաձայն որի՝ սպառողը վճարի դիմաց ձեռք է բերում գիշերակացի համար նախատեսված մեկ կամ մեկից ավելի կացարաններ օգտագործելու իրավունք՝ այն զբաղեցնելու համար նախատեսված մեկից ավելի ժամանակահատվածներով.
 - բ) «երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագիր» նշանակում է ավելի քան մեկ տարի տևողությամբ պայմանագիր, համաձայն որի՝ սպառողը վճարի դիմաց հիմնականում ձեռք է բերում կացարանի հետ կապված զեղչեր կամ այլ առավելություններ ստանալու իրավունք՝ առանձին կամ ճանապարհորդական կամ այլ ծառայությունների հետ միասին.
 - գ) «վերավաճառքի պայմանագիր» նշանակում է պայմանագիր, համաձայն որի՝ առետրային գործունեություն իրականացնողը վճարի դիմաց աջակցում է սպառողին՝ վաճառելու կամ գնելու տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանք կամ երկարաժամկետ արձակուրդի արտադրանք.
 - դ) «փոխանակման պայմանագիր» նշանակում է պայմանագիր, համաձայն որի՝ սպառողը վճարի դիմաց միանում է փոխանակման համակարգին, որը թույլ է տալիս սպառողին օգտվել գիշերակացի համար նախատեսված կացարանից կամ այլ ծառայություններից՝ այլ անձանց սպառողի տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ)

օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրից բխող իրավունքների առավելություններից ժամանակավորապես օգտվելու հնարավորություն տրամադրելու դիմաց.

- ե) «առետրային գործունեություն իրականացնող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է իր առետրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ հետապնդվող նպատակներ, եւ ցանկացած անձ, որը գործում է առետրային գործունեություն իրականացնողի անունից կամ նրա կողմից.
- զ) «սպառող» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որն իրականացնում է իր առետրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ չհետապնդվող նպատակներ.
- է) «լրացուցիչ պայմանագիր» նշանակում է պայմանագիր, որով սպառողը ձեռք է բերում տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի կամ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրի հետ կապված ծառայություններ, եւ որոնք մատուցվում են առետրային գործունեությունն իրականացնողների կամ երրորդ կողմի կողմից՝ այդ երրորդ կողմի եւ առետրային գործունեությունն իրականացնողի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա.
- ը) «հուսալի կրիչ» նշանակում է ցանկացած գործիք, որը սպառողին կամ առետրային գործունեություն իրականացնողին հնարավորություն է տալիս հետագա օգտագործման համար մատչելի ձեռով պահելու անձամբ իրեն հասցեագրված տեղեկությունները՝ տեղեկատվության նպատակներին համապատասխան ժամանակահատվածում եւ պահվող տեղեկությունների անփոփոխ վերարտադրումը հնարավոր է դարձնող եղանակով.

- թ) «վարքագծի կանոնագիրք» նշանակում է անդամ պետության օրենքով, կանոնակարգով կամ վարչական դրույթով չսահմանվող համաձայնագիր կամ կանոնների փաթեթ, որը սահմանում է այն առետրային գործունեություն իրականացնողների վարքագիծը, որոնք առետրային մեկ կամ ավելի կոնկրետ գործելակերպերի կամ ձեռնարկատիրական բնագավառների մասով ստանձնում են այդ կանոնագրքով սահմանված պարտավորությունները.
- ժ) «կանոնագրքի հեղինակ» նշանակում է ցանկացած անձ, ներառյալ՝ առետրային գործունեություն իրականացնողը կամ առետրային գործունեություն իրականացնողների խումբը, որը պատասխանատու է վարքագծի կանոնագրքի կազմման եւ վերանայման եւ (կամ) այդ կանոնագրքի պահանջների՝ այն անձանց կողմից կատարումը դիտանցելու համար, որոնք ստանձնել են դրանով սահմանված պարտավորությունները:
2. Տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի կամ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրի գործողության ժամկետը համապատասխանաբար 1-ին պարբերության (ա) եւ (բ) կետերով սահմանված կարգով հաշվարկելիս հաշվի է առնվում պայմանագրի ցանկացած դրույթ, որով թույլատրվում է պայմանագրի լռելյայն վերակնքումը կամ գործողության ժամկետի երկարաձգումը:

Հոդված 3

Գովազդը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ցանկացած գովազդով սահմանվի 4(1) հոդվածում նշված տեղեկությունն ստանալու հնարավորությունը եւ նշվի, թե որտեղից կարելի է այն ստանալ:

2. Եթե տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման եւ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող, վերավաճառքի կամ փոխանակման պայմանագիրը պետք է անձամբ առաջարկվի սպառողին գովազդային կամ վաճառքի միջոցառման ժամանակ, ապա առետրային գործունեություն իրականացնողը հրավերի մեջ հստակորեն պետք է նշի միջոցառման առետրային նպատակի եւ բնույթի մասին:
3. 4(1) հոդվածում նշված տեղեկությունը պետք է հասանելի լինի սպառողին միջոցառման ընթացքում ցանկացած ժամանակ:
4. Տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող կամ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքը չպետք է շուկայահանվի կամ վաճառվի՝ ներկայացվելով որպես ներդրում:

Հոդված 4

Պայմանագրի կնքմանը նախորդող փուլում տրամադրվող տեղեկությունները

1. Սպառողի կողմից պայմանագրով կամ առաջարկով սահմանված պարտավորությունների ստանձնումից բավականաչափ ժամանակ առաջ՝ նախապես, առետրային գործունեություն իրականացնողը հստակ եւ հասկանալի եղանակով սպառողին է տրամադրում ճշգրիտ եւ բավարար հետեւյալ տեղեկությունները.
 - ա) տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի դեպքում՝ I հավելվածով սահմանված ստանդարտ տեղեկատվական ձևի միջոցով՝ այդ ձևի 3-րդ մասում թվարկված տեղեկությունները.

- բ) երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրի դեպքում՝ II հավելվածով սահմանված ստանդարտ տեղեկատվական ձեւի միջոցով՝ այդ ձեւի 3-րդ մասում թվարկված տեղեկությունները.
- գ) վերավաճառքի պայմանագրի դեպքում՝ III հավելվածով սահմանված ստանդարտ տեղեկատվական ձեւի միջոցով՝ այդ ձեւի 3-րդ մասում թվարկված տեղեկությունները.
- դ) փոխանակման պայմանագրի դեպքում՝ IV հավելվածով սահմանված ստանդարտ տեղեկատվական ձեւի միջոցով՝ այդ ձեւի 3-րդ մասում թվարկված տեղեկությունները:
2. Առաջին պարբերության մեջ նշված տեղեկություններն առետրային գործունեություն իրականացնողի կողմից տրամադրվում են անվճար՝ թղթային տարբերակով կամ սպառողին հեշտությամբ հասանելի մեկ այլ հուսալի կրիչով:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները կազմվեն սպառողի ընտրությամբ այն անդամ պետության լեզվով կամ լեզուներից մեկով, որտեղ սպառողը բնակվում է կամ քաղաքացի է, պայմանով, որ այդ լեզուն Համայնքի պաշտոնական լեզու է:

Հոդված 5

**Տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման
իրավունքի ձեռքբերման, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին
վերաբերող, վերավաճառքի կամ փոխանակման պայմանագիրը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պայմանագիրը լինի գրավոր, թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով եւ կազմված լինի սպառողի ընտրությամբ այն անդամ պետության լեզվով կամ լեզուներից մեկով, որտեղ

սպառողը բնակվում է կամ քաղաքացի է, պայմանով, որ այդ լեզուն Համայնքի պաշտոնական լեզու է:

Այնուամենայնիվ, անդամ պետությունը, որտեղ սպառողը բնակիչ է, կարող է պահանջել, որ լրացուցիչ կերպով՝

ա) ցանկացած դեպքում պայմանագիրը սպառողին տրամադրվի այդ անդամ պետության լեզվով կամ լեզուներից մեկով, պայմանով, որ այն Համայնքի պաշտոնական լեզու է.

բ) տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագիրը մեկ կոնկրետ անշարժ գույքի վերաբերելու դեպքում առետրային գործունեություն իրականացնողը սպառողին տրամադրի պայմանագրի վավերացված թարգմանությունն այն անդամ պետության լեզվով կամ լեզուներից մեկով, որտեղ գտնվում է անշարժ գույքը, պայմանով, որ այն Համայնքի պաշտոնական լեզու է:

Այն անդամ պետությունը, որի տարածքում առետրային գործունեություն իրականացնողը վաճառքի գործունեություն է ծավալում, կարող է պահանջել, որ ցանկացած դեպքում պայմանագիրը սպառողին տրամադրվի այդ անդամ պետության լեզվով կամ լեզուներից մեկով, պայմանով, որ այն Համայնքի պաշտոնական լեզու է:

2. 4(1) հոդվածում նշված տեղեկությունները կազմում են պայմանագրի անբաժանելի մասը եւ չեն փոփոխվում, եթե կողմերը հստակորեն այլ բան չեն պայմանավորվել, կամ փոփոխությունները չեն բխում առետրային գործունեություն իրականացնողի վերահսկողությունից դուրս՝ անսովոր եւ անկանխատեսելի այնպիսի հանգամանքներից, որոնց հետեւանքներն անխուսափելի են եղել նույնիսկ պատշաճ ուշադրության դեպքում:

Այդ փոփոխությունները թղթային եղանակով կամ սպառողի համար հեշտ հասանելի մեկ այլ հուսալի կրիչով հաղորդվում են սպառողին նախքան պայմանագրի կնքումը:

Պայմանագրում հստակ նշվում է ցանկացած այդպիսի փոփոխության մասին:

3. Ի լրումն 4(1) հոդվածում նշված տեղեկությունների՝ պայմանագիրը ներառում է հետևյալը.

ա) կողմերից յուրաքանչյուրի ինքնությունը, բնակության վայրը եւ ստորագրությունը, եւ

բ) պայմանագրի կնքման օրը եւ վայրը:

4. Նախքան պայմանագիր կնքելը առետրային գործունեություն իրականացնողը սպառողի ուշադրությունը բացահայտորեն հրավիրում է պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքի գոյության, 6-րդ հոդվածում նշված՝ պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածի տեւողության, ինչպես նաեւ 9-րդ հոդվածում նշված՝ պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածում կանխավճարների արգելքի մասին:

Պայմանագրի համապատասխան կետերը սպառողի կողմից ստորագրվում են առանձին:

Պայմանագիրը ներառում է V հավելվածով սահմանված՝ պայմանագրի կատարումից հրաժարվելու առանձին ստանդարտ ձեւ, որը նախատեսված է 6-րդ հոդվածի համաձայն պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքի իրացումը պարզեցնելու համար:

5. Սպառողը պայմանագրի կնքման պահին ստանում է դրա պատճենը կամ պատճենները:

*Հոդված 6***Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքը**

1. Ի լրումն ազգային օրենսդրությամբ սպառողին հասանելի պաշտպանության միջոցների՝ սույն հրահանգի դրույթների խախտման դեպքում անդամ պետություններն ապահովում են, որ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող, վերավաճառքի կամ փոխանակման պայմանագրերից առանց որեւէ պատճառաբանության հրաժարվելու համար սպառողին տրամադրվում է 14 օրացուցային օր:
2. Պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը հաշվարկվում է՝
 - ա) պայմանագրի կնքման կամ պարտադիր ուժ ունեցող որեւէ նախնական պայմանագրի կնքման օրվանից, եւ
 - բ) այն օրվանից, երբ սպառողն ստանում է պայմանագիրը կամ պարտադիր ուժ ունեցող որեւէ նախնական պայմանագիր, եթե այն տեղի է ունենում (ա) կետում նշված օրվանից ավելի ուշ:
3. Պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը լրանում է՝
 - ա) սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված օրվանից մեկ տարի եւ 14 օրացուցային օր անց, եթե առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից չի լրացվել 5(4) հոդվածով պահանջվող՝ պայմանագրի կատարումից հրաժարվելու ստանդարտ ձեւը եւ չի տրամադրվել սպառողին գրավոր կերպով, թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով.
 - բ) սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված օրվանից երեք ամիս եւ 14 օրացուցային օր անց, եթե 4(1) հոդվածում նշված տեղեկությունները,

ներառյալ՝ I-IV հավելվածներով սահմանված կիրառվող ստանդարտ տեղեկատվական ձեւը չեն տրամադրվել սպառողին գրավոր կերպով, թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով:

Բացի այդ, անդամ պետությունները, 15-րդ հոդվածի համաձայն, նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ մասնավորապես այն դեպքում, երբ պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը լրանալիս առետրային գործունեություն իրականացնողը չի կատարել սույն հրահանգով սահմանված տեղեկատվության պահանջները:

4. Եթե 5(4) հոդվածով պահանջվող պայմանագրի կատարումից հրաժարվելու առանձին ստանդարտ ձեւը լրացվել է առետրային գործունեություն իրականացնողի կողմից եւ տրամադրվել սպառողին գրավոր կերպով, թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով՝ սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված օրվանից մեկ տարվա ընթացքում, ապա պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածն սկսվում է այն օրը, երբ սպառողն ստանում է այդ ձեւը: Նմանապես, եթե 4(1) հոդվածում նշված տեղեկությունները, ներառյալ՝ I-IV հավելվածներով սահմանված կիրառվող ստանդարտ տեղեկատվական ձեւը, տրամադրվել են սպառողին գրավոր կերպով, թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով՝ սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված օրվանից երեք ամսվա ընթացքում, ապա պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածն սկսվում է այն օրը, երբ սպառողն ստանում է այդպիսի տեղեկություններ:
5. Եթե փոխանակման պայմանագիրը սպառողին առաջարկվում է տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի հետ միասին եւ միաժամանակ, ապա 1-ին պարբերության համաձայն՝ երկու պայմանագրերի նկատմամբ կիրառվում է պայմանագրի կատարումից հրաժարվելու միայն մեկ

ժամանակահատված: Երկու պայմանագրերի համար պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը հաշվարկվում է 2-րդ պարբերության դրույթների համաձայն, քանի որ դրանք կիրառվում են տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի նկատմամբ:

Հոդված 7

Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելու եղանակները

Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելու մտադրության դեպքում սպառողը նախքան պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը լրանալն առետրային գործունեություն իրականացնողին թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով ծանուցում է պայմանագրի կատարումից հրաժարվելու որոշման մասին: Սպառողը կարող է օգտվել V հավելվածով սահմանված եւ 5(4) հոդվածին համապատասխան՝ առետրային գործունեություն իրականացնողի կողմից պայմանագրի կատարումից հրաժարվելու ստանդարտ ձեւից: Վերջնաժամկետը համարվում է պահպանված, եթե ծանուցումն ուղարկվում է նախքան պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածը լրանալը:

Հոդված 8

Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելու հետեանքները

1. Սպառողի կողմից պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքի իրացմամբ դադարեցվում է կողմերի՝ պայմանագիրը կատարելու պարտավորությունը:
2. Սպառողն իր կողմից պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքը իրացվելու դեպքում չի կրում որեւէ ծախս եւ պատասխանատու չէ որեւէ արժեքի համար, որը կհամապատասխանի մինչեւ պայմանագրի կատարումից հրաժարվելը հնարավոր մատուցված ծառայությանը:

Հոդված 9

Կանխավճարը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ արգելվի տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող եւ փոխանակման պայմանագրերի հետ կապված ցանկացած կանխավճար, երաշխիքների տրամադրում, հաշիվների վրա գումարի պահպանում, պարտքի բացահայտ ճանաչում կամ սպառողի կողմից առետրային գործունեություն իրականացնողին կամ երրորդ կողմին որեւէ վճարի կատարում՝ նախքան 6-րդ հոդվածի համաձայն պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածի ավարտը:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ արգելվի վերավաճառքի պայմանագրերի հետ կապված ցանկացած կանխավճար, երաշխիքների

տրամադրում, հաշիվների վրա գումարի պահպանում, պարտքի բացահայտ ճանաչում կամ սպառողի կողմից առետրային գործունեություն իրականացնողին կամ երրորդ կողմին որեւէ վճարի կատարում՝ նախքան փաստացի վաճառքի իրականացումը կամ վերավաճառքի պայմանագրի գործողությունն այլ կերպ դադարեցնելը:

Հոդված 10

Երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրերին առնչվող հատուկ դրույթները

1. Երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրերի դեպքում վճարումը կատարվում է ըստ փուլային վճարման ժամանակացույցի: Պայմանագրով սահմանված գումարի ցանկացած վճարում արգելվում է, եթե այն չի համապատասխանում փուլային վճարման ժամանակացույցին: Վճարումները, ներառյալ՝ անդամակցության որեւէ վճար, բաժանվում են տարեկան կատարվող հերթական վճարումների, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար արժեք: Առետրային գործունեություն իրականացնողն ուղարկում է վճարման գրավոր պահանջ՝ թղթային եղանակով կամ մեկ այլ հուսալի կրիչով, վճարման յուրաքանչյուր ժամկետից առնվազն տասնչորս օրացուցային օր առաջ:
2. Երկրորդ հերթական վճարման կատարումից սկսած՝ սպառողն ունի առանց որեւէ պատժամիջոց կրելու պայմանագրի գործողությունը դադարեցնելու իրավունք՝ ծանուցում ներկայացնելով առետրային գործունեություն իրականացնողին յուրաքանչյուր հերթական վճարում կատարելու պահանջն ստանալու օրվանից տասնչորս օրացուցային օրվա ընթացքում: Սույն իրավունքը չի ազդում գործող ազգային օրենսդրության համաձայն պայմանագրի գործողությունը դադարեցնելու իրավունքների վրա:

*Հոդված 11***Լրացուցիչ պայմանագրերի գործողությունը դադարեցնելը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ եթե սպառողն իրացնում է տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի կամ երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրի կատարումից հրաժարվելու իր իրավունքը, ապա փոխանակման որեւէ լրացուցիչ պայմանագրի կամ որեւէ այլ լրացուցիչ պայմանագրի գործողության ժամկետն ավտոմատ կերպով դադարեցվում է՝ առանց սպառողի կողմից որեւէ ծախս կրելու:
2. Չհակասելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 23-ի «Սպառողների համար վարկային պայմանագրերի մասին» 2008/48/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածին ⁽¹⁾, եթե գինն ամբողջությամբ կամ մասամբ վճարվել է առետրային գործունեություն իրականացնողի կամ երրորդ կողմի կողմից սպառողին տրամադրված վարկի միջոցով երրորդ կողմի եւ առետրային գործունեություն իրականացնողի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, ապա վարկային պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝ դրա դիմաց սպառողից որեւէ վճար չգանձելով, եթե սպառողն իրացնում է տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող պայմանագրի, վերավաճառքի կամ փոխանակման պայմանագրի կատարումից հրաժարվելու իր իրավունքը:
3. Անդամ պետությունները սահմանում են այդպիսի պայմանագրերի գործողության դադարեցման մասով մանրամասն կանոններ:

(¹) ՊՏ L 133, 22.05.2008թ., էջ 66:

Հոդված 12

Հրահանգի հրամայական բնույթը եւ կիրառումը միջազգային գործերում

1. Անդամ պետություններն ապահովում են, որ եթե պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենսդրությունը անդամ պետության օրենսդրությունն է, ապա սպառողները չեն կարող հրաժարվել սույն հրահանգով իրենց վերապահված իրավունքներից:
2. Եթե կիրառելի օրենսդրությունը երրորդ երկրի օրենսդրությունն է, ապա սպառողները չեն զրկվում սույն հրահանգով տրամադրվող այն պաշտպանությունից, որն իրականացվում է հարթակի անդամ պետությունում, եթե՝
 - տվյալ անշարժ գույքից որեւէ մեկը գտնվում է անդամ պետության տարածքում, կամ
 - պայմանագիրն անշարժ գույքին ուղղակիորեն չվերաբերելու պարագայում առետրային գործունեություն իրականացնողն անդամ պետությունում ծավալում է առետրային կամ մասնագիտական գործունեություն, կամ որեւէ կերպ այդ գործունեությունն ուղղում է անդամ պետությանը, եւ այդ գործունեության վրա տարածվում է պայմանագրի գործողության ոլորտը:

Հոդված 13

Դատական եւ վարչական պաշտպանության միջոցները

1. Անդամ պետությունները, սպառողների շահերից ելնելով, ապահովում են համապատասխան եւ արդյունավետ միջոցների առկայությունը՝ առետրային

գործունեություն իրականացնողների կողմից սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար:

2. Առաջին պարբերության մեջ նշված միջոցները պարունակում են դրույթներ, որոնց համաձայն ստորեւ նշված մեկ կամ մի քանի մարմիններ, իրավասու են ազգային օրենսդրության համաձայն միջոցներ ձեռնարկել դատարաններում կամ իրավասու վարչական մարմիններում՝ ապահովելու համար սույն հրահանգի իրականացման համար անհրաժեշտ դրույթների կիրառումը՝
 - ա) պետական մարմիններ եւ իշխանություններ կամ նրանց ներկայացուցիչներ.
 - բ) սպառողների հարցերով կազմակերպություններ, որոնք օրինական շահ ունեն սպառողների պաշտպանության հարցում.
 - գ) մասնագիտացված կազմակերպություններ, որոնք այդպիսի գործունեություն ծավալելու հարցում ունեն օրինական շահ:

Հոդված 14

Սպառողների համար նախատեսված տեղեկությունները եւ արտադատական պաշտպանության միջոցները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ տեղեկացնելու սպառողներին սույն հրահանգը փոխատեղող ազգային օրենսդրության մասին եւ հարկ եղած դեպքում՝ խրախուսում առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ վարքագծի կանոնագրքի հեղինակներին, որպեսզի վերջիններս իրենց վարքագծի կանոնագրքերի մասին տեղեկացնեն սպառողներին:

Համայնքի օրենսդրությանը համապատասխան՝ Հանձնաժողովը Համայնքի մակարդակով խրախուսում է մասնավորապես արհեստավարժ մարմինների,

կազմակերպությունների եւ ասոցիացիաների կողմից վարքագծի կանոնագրքերի կազմումը, որն ուղղված է սույն հրահանգի կիրառման պարզեցմանը: Այն նաեւ խրախուսում է առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ նրանց՝ մասնաճյուղ հանդիսացող կազմակերպություններին, որպեսզի վերջիններս տեղեկացնեն սպառողներին այդպիսի ցանկացած վարքագծի կանոնագրքի մասին, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ մակնշման միջոցով:

2. Անդամ պետությունները խրախուսում են հիմնել արտադատական բողոքների եւ պաշտպանության միջոցների համարժեք եւ արդյունավետ ընթացակարգեր՝ սպառողների վեճերը սույն հրահանգով լուծելու համար, եւ անհրաժեշտության դեպքում խրախուսում են առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ նրանց մասնաճյուղ հանդիսացող կազմակերպություններին, որպեսզի վերջիններս սպառողներին տեղեկացնեն այդպիսի ընթացակարգերի առկայության մասին:

Հոդված 15

Պատժամիջոցները

1. Անդամ պետությունները նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ այն դեպքում, երբ առեւտրային գործունեություն իրականացնողին չի հաջողվում ապահովել համապատասխանություն սույն հրահանգի համաձայն ընդունված ներպետական օրենսդրությանը:
2. Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

*Հոդված 16***Փոխատեղումը**

1. Անդամ պետություններն ընդունում եւ հրապարակում են սույն հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները մինչեւ 2011 թվականի փետրվարի 23-ը: Նրանք անմիջապես Հանձնաժողով են ներկայացնում այդ դրույթների տեքստը:

Նրանք այդ դրույթները կիրառում են 2011 թվականի փետրվարի 23-ից:

Այդ դրույթներն անդամ պետությունների կողմից ընդունվելու դեպքում դրանք պետք է պարունակեն սույն հրահանգին կատարված հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում ուղեկցվեն այդպիսի հղումով: Անդամ պետությունները որոշում են , թե ինչպես պետք է կատարվի այդ հղումը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

*Հոդված 17***Վերանայումը**

Հանձնաժողովը վերանայում է սույն հրահանգը եւ զեկուցում Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին ոչ ուշ, քան 2014 թվականի փետրվարի 23-ը:

Անհրաժեշտության դեպքում այն հետագայում առաջարկներ է ներկայացնում՝ սույն հրահանգը՝ ոլորտում տեղի ունեցող զարգացումներին հարմարեցնելու նպատակով:

Հանձնաժողովը կարող է տեղեկություններ պահանջել անդամ պետություններից եւ ազգային կարգավորող մարմիններից:

*Հոդված 18***Ուժը կորցրած ճանաչելը**

94/47/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչել:

Ուժը կորցրած հրահանգին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն հրահանգին կատարվող հղումներ եւ ընթերցվում են VI հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի համաձայն:

*Հոդված 19***Ուժի մեջ մտնելը**

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

*Հոդված 20***Հասցեատերերը**

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2009 թվականի հունվարի 14-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Նախագահ

Հ.-Գ. ՓՈԹԵՐԻՆԳ

Ա. ՎՈՆԴՐԱ

ՀԱՎԵԼՎԱԾ I

**ՏԱՐԱԺԱՄԿԵՏ (ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ)
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՍՏԱՆԴԱՐՏ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՎԸ**

Մաս 1.

<p>Պայմանագրի կողմ հանդիսացող՝ առետրային գործունեություն իրականացնողի (իրականացնողների) ինքնությունը, բնակության վայրը (գրանցման վայրը) եւ իրավական կարգավիճակը՝</p>
<p>Արտադրանքի համառոտ նկարագրությունը (օրինակ՝ անշարժ գույքի նկարագրությունը)՝</p> <p>Իրավունքի (իրավունքների) ճշգրիտ բնույթը եւ բովանդակությունը՝</p>
<p>Ճշգրիտ ժամանակահատվածը, որի ընթացքում կարող է իրացվել պայմանագրի առարկա հանդիսացող իրավունքը, եւ անհրաժեշտության դեպքում՝ դրա տեւողությունը՝</p> <p>Այն օրը, երբ սպառողը կարող է սկսել իրացնել իր պայմանագրային իրավունքը՝</p> <p>Եթե պայմանագիրը վերաբերում է կառուցման փուլում գտնվող կոնկրետ գույքի, այն օրը, երբ կացարանը եւ ծառայությունները ավարտին կհասցվեն, իսկ օբյեկտները հասանելի կլինեն՝</p>
<p>Իրավունք (իրավունքներ) ձեռք բերելու համար սպառողի կողմից վճարվող գումարը՝</p> <p>Պայմանագրով սահմանված լրացուցիչ պարտադիր ծախսերի նկարագիրը, ծախսերի տեսակները եւ գումարների մասին նշումը (օրինակ՝ տարեկան կատարվող վճարները, պարբերաբար կատարվող այլ վճարներ, հատուկ գանձումները, տեղական հարկերը)՝</p>
<p>Սպառողին հասանելի հիմնական ծառայությունների ամփոփագիրը (օրինակ՝ էլեկտրականություն, ջուր, սպասարկում, աղբահանություն) եւ այդպիսի ծառայությունների դիմաց սպառողի կողմից վճարման ենթակա գումարի չափի նշումը՝</p> <p>Սպառողին հասանելի օբյեկտների ամփոփագիրը (օրինակ՝ լողավազանը կամ շոգեբաղնիքը)՝</p> <p>Արդյո՞ք այս օբյեկտները ներառված են վերոնշյալ ծախսերում:</p> <p>Եթե ոչ, ապա նշե՛ք, թե ինչ է ներառված, եւ որքան գումար պետք է վճարվի՝</p>
<p>Արդյո՞ք հնարվոր է միանալ փոխանակման ծրագրին:</p> <p>Եթե այո, ապա նշե՛ք փոխանակման ծրագրի անվանումը՝</p> <p>Անդամակցության/փոխանակման ծախսերի մասին նշումը՝</p>
<p>Արդյո՞ք առետրային գործունեություն իրականացնողը ստորագրել է վարքագծի կանոնագիրքը (կանոնագրքերը), եւ եթե այո, ապա որտե՞ղ կարելի է դա (դրանք) գտնել:</p>

Մաս 2.

<p>Ընդհանուր տեղեկությունները.</p> <ul style="list-style-type: none"> — սպառողն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից պայմանագրի կամ որեւէ պարտադիր նախնական պայմանագրի կնքումից կամ այդ պայմանագրերն ստանալուց հետո 14 օրացուցային օրերի ընթացքում, եթե այն ավելի ուշ է տեղի ունենում. — պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածում արգելվում է սպառողի կողմից որեւէ կանխավճարի կատարում: Արգելքը վերաբերում է ցանկացած վճարի, ներառյալ՝ վճարման, երաշխիքների տրամադրմանը, հաշիվների վրա գումարի պահպանմանը, պարտքի բացահայտ ճանաչմանը եւ այլն: Այն ներառում է ոչ միայն առետրային գործունեություն իրականացնողին, այլ նաեւ երրորդ կողմերին կատարվող վճարումը. — պայմանագրում նշված ծախսերից կամ պարտավորություններից բացի՝ սպառողը չի կրում որեւէ այլ ծախս կամ պարտավորություն. — միջազգային մասնավոր իրավունքի համաձայն՝ պայմանագիրը կարող է կարգավորվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության օրենսդրությամբ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր, եւ հնարավոր վեճերը կարող են ուղարկվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության այլ դատարաններ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր: <p>Սպառողի ստորագրությունը՝</p>

Մաս 3.

<p>Լրացուցիչ տեղեկություններ, որոնք ստանալու իրավունք ունի սպառողը, եւ տեղեկություն այն մասին, թե կոնկրետ որտեղ կարելի է դրանք ձեռք բերել (օրինակ՝ ընդհանուր բրոշյուրի որ գլխում), եթե ստորեւ ներկայացված չեն՝</p> <p>1. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> — պայմանագրի առարկա հանդիսացող իրավունքի իրացումը կարգավորող պայմաններն այն անդամ պետության (պետությունների) տարածքում, որտեղ գտնվում է (են) տվյալ գույքը կամ գույքերը, եւ տեղեկություն այն մասին, թե արդյոք այդ պայմանները կատարվել են, եւ եթե չեն կատարվել, ապա ի՞նչ պայմաններ դեռ պետք է կատարվեն. — սպառողի՝ ցանկացած ժամանակ կացարանների ընդհանուր ֆոնդից որեւէ կացարան օգտագործելու հնարավորության մասով սահմանափակումների մասին տեղեկություններ, եթե պայմանագրով տրամադրվում է այնպիսի կացարան զբաղեցնելու իրավունք, որը պետք է ընտրվի կացարանների ընդհանուր ֆոնդից:

2. ԳՈՒՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- եթե պայմանագիրը վերաբերում է կոնկրետ անշարժ գույքի, ապա այդ գույքի ճշգրիտ եւ մանրակրկիտ նկարագրությունը եւ գտնվելու վայրը, եթե պայմանագիրը վերաբերում է մի շարք գույքերի (մուլտի հանգստյան տների), ապա՝ գույքերի համապատասխան նկարագրությունը եւ նրանց գտնվելու վայրը, եթե պայմանագիրը վերաբերում է անշարժ գույք չհանդիսացող այլ կացարանի, ապա՝ կացարանի եւ օբյեկտների համապատասխան նկարագրությունը,
- ծառայությունները (էներգամատակարարում, ջրամատակարարում, սպասարկում, աղբահանություն), որոնցից օգտվում կամ օգտվելու է սպառողը, եւ դրանցից օգտվելու պայմանները,
- անհրաժեշտության դեպքում՝ ընդհանուր օգտագործման հարմարություններ, ինչպիսիք են լողավազանը, շոգեբաղնիքը եւ այլն, որոնցից օգտվում կամ կարող է օգտվել սպառողը, եւ դրանցից օգտվելու պայմանները:

3. ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ (անհրաժեշտության դեպքում)

- կացարանն ավարտուն վիճակի հասցնելու եւ դրա լիարժեք շահագործումն ապահովող ծառայությունների վիճակը (գազամատակարարում, էներգամատակարարում, ջրամատակարարում եւ հեռախոսային կապի միջոցներ) եւ ցանկացած օբյեկտ, որը հասանելի կլինի սպառողին.
- կացարանն ավարտուն վիճակի հասցնելու եւ դրա լիարժեք շահագործումն ապահովող ծառայությունների (գազամատակարարում, էներգամատակարարում, ջրամատակարարում եւ հեռախոսային կապի միջոցներ) սահմանված վերջնաժամկետը եւ սպառողին հասանելի ցանկացած օբյեկտ ավարտուն վիճակի հասցնելու համար սահմանված վերջնաժամկետի ողջամիտ գնահատում.
- շինարարության թույլտվության համարը եւ իրավասու մարմնի կամ մարմինների անվանումը (անվանումները) եւ ամբողջական հասցեն (հասցեները),
- կացարանն ավարտուն վիճակի հասցնելու երաշխիք կամ կացարանն ավարտուն վիճակի չհասցնելու դեպքում՝ կատարված ցանկացած վճարման փոխհատուցման երաշխիք, ու անհրաժեշտության դեպքում՝ այդպիսի երաշխիքների գործողությունը կարգավորող պայմանները:

4. ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի հետ կապված բոլոր ծախսերի ճշգրիտ եւ պատշաճ նկարագրությունը, թե ինչպես են այդ ծախսերը հասցեագրվում սպառողին, եւ ինչպես ու երբ կարող են այդ ծախսերն ավելանալ, գույքը զբաղեցնելու համար գանձվող գումարների հաշվարկման մեթոդը, սահմանված պարտադիր գանձումները (օրինակ՝ հարկեր եւ վճարներ) եւ վարչական վերադիր ծախսերը (օրինակ՝ կառավարում, սպասարկում եւ վերանորոգում)։
- անհրաժեշտության դեպքում՝ տեղեկություն այն մասին, թե արդյոք առկա է որեւէ վճար, հիփոթեքային վարկ, սահմանափակումներ կամ գույքի վրա որեւէ այլ կալանք, որը գրանցված է կացարանի սեփականության իրավունքի նկատմամբ։

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ պայմանագրերի գործողության դադարեցման մասով պայմանավորվածությունների եւ այդ դադարեցման հետեւանքների մասին տեղեկությունը։
- պայմանագրի գործողությունը դադարեցնելու պայմանները, դադարեցման հետեւանքները, այդ դադարեցման հետեւանքով առաջացող հնարավոր ցանկացած ծախս կրելու՝ սպառողի պարտավորության մասին տեղեկությունը։

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- տեղեկություն այն մասին, թե ինչպես են կազմակերպվում գույքի սպասարկումը եւ վերանորոգման աշխատանքները, ինչպես նաեւ դրա ղեկավարումը եւ կառավարումը, այդ թվում՝ տեղեկություններ այն մասին՝ արդյոք սպառողներն ազդեցություն են ունենում եւ կարող են մասնակցել այդ հարցերի մասով որոշումների կայացմանը, եւ եթե այո, ապա ինչպես։
- տեղեկություն այն մասին, թե արդյոք պայմանագրային իրավունքների վերավաճառքի համար հնարավոր է միանալ որեւէ համակարգի, համապատասխան համակարգի մասին տեղեկություն եւ այդ համակարգի միջոցով վերավաճառքի հետ կապված ծախսերի մասին նշում։
- առետրային գործունեություն իրականացնողի հետ պայմանագրի առնչությամբ, օրինակ՝ կառավարման մասին որոշումների, արժեքների աճի եւ հարցումների ու

բողոքների կարգավորման մասով հաղորդակցման համար հասանելի
լեզվի(լեզուների) նշում.

— անհրաժեշտության դեպքում՝ վեճերի՝ արտադատական կարգով լուծման
հնարավորություն:

Տեղեկությունների ստացման հաստատումը՝

Սպառողի ստորագրությունը՝

ՀԱՎԵԼՎԱԾ II

**ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՎԸ**

Մաս 1.

<p>Պայմանագրի կողմ հանդիսացող՝ առետրային գործունեություն իրականացնողի (իրականացնողների) ինքնությունը, բնակության վայրը (գրանցման վայրը) եւ իրավական կարգավիճակը՝</p>
<p>Արտադրանքի համառոտ նկարագրությունը՝ Իրավունքի (իրավունքների) ճշգրիտ բնույթը եւ բովանդակությունը՝</p>
<p>Ճշգրիտ ժամանակահատվածը, որի ընթացքում կարող է իրացվել պայմանագրի առարկա հանդիսացող իրավունքը, եւ անհրաժեշտության դեպքում՝ դրա տեւողությունը՝ Այն օրը, երբ սպառողը կարող է սկսել իրացնել իր պայմանագրային իրավունքը՝</p>
<p>Իրավունք (իրավունքներ) ձեռք բերելու համար սպառողի կողմից վճարվող գումարը, ներառյալ՝ ցանկացած պարբերաբար կատարվող ծախս, որն ակնկալվում է, որ սպառողը կարող է կրել նախատեսված կարգով կացարանի, ճանապարհորդության եւ ցանկացած հարակից արտադրանքի կամ ծառայության մասով հասանելիության իրավունք ստանալու համար՝ Փուլային վճարման ժամանակացույցը, որը սահմանում է այս գնի հերթական վճարումների հավասար գումարների չափը պայմանագրի գործողության ժամկետի յուրաքանչյուր տարվա համար, եւ այն օրերը, երբ դրանք պետք է վճարվեն՝ Առաջին տարվանից հետո հետագա գումարները կարող են ճշգրտվել՝ ապահովելու, որ այդ հերթական վճարումների իրական արժեքը պահպանվի, օրինակ՝ հաշվի առնելով գնաճը: Պայմանագրով սահմանված լրացուցիչ պարտադիր ծախսերի նկարագիրը, ծախսերի տեսակները եւ գումարների մասին նշումը (օրինակ՝ տարեկան անդամակցության վճարներ)՝</p>
<p>Սպառողին հասանելի հիմնական ծառայությունների ամփոփագիրը (օրինակ՝ զեղչված արժեքով հյուրանոցներում մնալը եւ թռիչքները)՝ Արդյո՞ք դրանք ներառված են վերոնշյալ ծախսերում: Եթե ոչ, ապա նշե՛ք, թե ինչ է ներառված, եւ որքան գումար պետք է վճարվի (օրինակ՝ անդամակցության վճարում ներառված երեք գիշեր տեւողությամբ կացությունը, կացարանի հետ կապված մյուս բոլոր ծախսերը պետք է վճարվեն առանձին)՝</p>
<p>Արդյո՞ք առետրային գործունեություն իրականացնողը ստորագրել է վարքագծի կանոնագիրքը (կանոնագրքերը), եւ եթե այո, ապա որտե՞ղ կարելի է դա (դրանք) գտնել:</p>

Մաս 2.**Ընդհանուր տեղեկությունները.**

- սպառողն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից պայմանագրի կամ որեւէ պարտադիր նախնական պայմանագրի կնքումից կամ այդ պայմանագրերն ստանալուց հետո 14 օրացուցային օրերի ընթացքում, եթե այն ավելի ուշ է տեղի ունենում.
- պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածում արգելվում է սպառողի կողմից կատարվող որեւէ կանխավճարի կատարում: Արգելքը վերաբերում է ցանկացած վճարի, ներառյալ՝ վճարման, երաշխիքների տրամադրմանը, հաշիվների վրա գումարի պահպանմանը, պարտքի բացահայտ ճանաչմանը եւ այլն: Այն ներառում է ոչ միայն առետրային գործունեություն իրականացնողին, այլ նաեւ երրորդ կողմերին կատարվող վճարումը.
- սպառողն ունի առանց որեւէ պատճամիջոց կրելու պայմանագրի գործողությունը դադարեցնելու իրավունք՝ ծանուցում ներկայացնելով առետրային գործունեություն իրականացնողին տարեկան կատարվող յուրաքանչյուր հերթական վճարում կատարելու պահանջն ստանալու օրվանից 14 օրացուցային օրվա ընթացքում.
- պայմանագրում նշված ծախսերից կամ պարտավորություններից բացի՝ սպառողը չի կրում որեւէ այլ ծախս կամ պարտավորություն.
- միջազգային մասնավոր իրավունքի համաձայն՝ պայմանագիրը կարող է կարգավորվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության օրենսդրությամբ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր, եւ հնարավոր վեճերը կարող են ուղարկվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության այլ դատարաններ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր:

Սպառողի ստորագրությունը՝

Մաս 3.

<p>Լրացուցիչ տեղեկություններ, որոնք ստանալու իրավունք ունի սպառողը, եւ տեղեկություն այն մասին, թե կոնկրետ որտեղ կարելի է դրանք ձեռք բերել (օրինակ՝ ընդհանուր բրոշյուրի որ գլխում), եթե ստորեւ ներկայացված չեն՝</p>	
1.	<p>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>— հետագա ամրագրումների համար հասանելի զեղչերի պատշաճ եւ ճշգրիտ նկարագրությունը, որը ներկայացված է վերջին առաջարկների մի շարք օրինակներով.</p> <p>— տեղեկություն սպառողի՝ իրավունքներից օգտվելու հնարավորության սահմանափակումների մասին, ինչպիսիք են սահմանափակ հասանելիությունը կամ «առաջնահերթ սպասարկում առաջիններին» կարգով ներկայացված առաջարկները, հատուկ գովազդային առաջարկների եւ հատուկ զեղչերի ժամանակային սահմանափակումները:</p>
2.	<p>ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>— անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ պայմանագրերի գործողության դադարեցման մասով պայմանավորվածությունների եւ այդ դադարեցման հետեւանքների մասին տեղեկությունը.</p> <p>— պայմանագրի գործողությունը դադարեցնելու պայմանները, դադարեցման հետեւանքները եւ այդ դադարեցման հետեւանքով առաջացող հնարավոր ցանկացած ծախս կրելու՝ սպառողի պարտավորության մասին տեղեկությունը:</p>
3.	<p>ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>— առեւտրային գործունեություն իրականացնողի հետ պայմանագրի առնչությամբ, օրինակ՝ հարցումների եւ բողոքների կարգավորման մասով հաղորդակցման համար հասանելի լեզվի(լեզուների) նշումը.</p> <p>— անհրաժեշտության դեպքում՝ վեճերի՝ արտադատական կարգով լուծման հնարավորությունը:</p>

Տեղեկությունների ստացման հաստատումը՝

Սպառողի ստորագրությունը՝

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՎԵՐԱՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՎԸ

Մաս 1.

Պայմանագրի կողմ հանդիսացող՝ առևտրային գործունեություն իրականացնողի (իրականացնողների) ինքնությունը, բնակության վայրը (գրանցման վայրը) եւ իրավական կարգավիճակը՝
Ծառայությունների (օրինակ՝ շուկայավարման) համառոտ նկարագրությունը՝
Պայմանագրի գործողության ժամկետը՝
Ծառայություններ ձեռք բերելու համար սպառողի կողմից վճարվող գումարը՝ Պայմանագրով սահմանված լրացուցիչ պարտադիր ծախսերի նկարագիրը, ծախսերի տեսակները եւ գումարների նշումը (օրինակ՝ տեղական հարկերը, նոտարական վճարները, գովազդի ծախսը)՝
Արդյո՞ք առևտրային գործունեություն իրականացնողը ստորագրել է վարքագծի կանոնագիրքը (կանոնագրքերը), եւ եթե այո, ապա որտե՞ղ կարելի է դա (դրանք) գտնել:

Մաս 2.

<p>Ընդհանուր տեղեկությունները.</p> <ul style="list-style-type: none"> — սպառողն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից պայմանագրի կամ որեւէ պարտադիր նախնական պայմանագրի կնքումից կամ այդ պայմանագրերն ստանալուց հետո 14 օրացուցային օրերի ընթացքում, եթե այն ավելի ուշ է տեղի ունենում. — արգելվում է սպառողի կողմից որեւէ կանխավճար մինչեւ փաստացի վաճառքի իրականացումը կամ վերավաճառքի պայմանագրի գործողությունն այլ կերպ դադարեցնելը: Արգելքը վերաբերում է ցանկացած վճարի, ներառյալ՝ վճարման, երաշխիքների տրամադրմանը, հաշիվների վրա գումարի պահպանմանը, պարտքի բացահայտ ճանաչմանը եւ այլն: Այն ներառում է ոչ միայն առևտրային գործունեություն իրականացնողին, այլ նաեւ երրորդ կողմերին կատարվող վճարումը. — պայմանագրում նշված ծախսերից կամ պարտավորություններից բացի՝ սպառողը չի կրում որեւէ այլ ծախս կամ պարտավորություն, — միջազգային մասնավոր իրավունքի համաձայն՝ պայմանագիրը կարող է կարգավորվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության օրենսդրությամբ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր, եւ հնարավոր վեճերը կարող են ուղարկվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության այլ դատարաններ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր: <p>Սպառողի ստորագրությունը՝</p>
--

Մաս 3.

Լրացուցիչ տեղեկություններ, որոնք ստանալու իրավունք ունի սպառողը, եւ տեղեկություն այն մասին, թե կոնկրետ որտեղ կարելի է դրանք ձեռք բերել (օրինակ՝ ընդհանուր բրոշյուրի որ գլխում), եթե ստորեւ ներկայացված չեն՝

- պայմանագրի գործողությունը դադարեցնելու համար պայմանները, դադարեցման հետեւանքները եւ այդ դադարեցման հետեւանքով առաջացող հնարավոր ցանկացած ծախս կրելու՝ սպառողի պարտավորության մասին տեղեկությունը,
- առետրային գործունեություն իրականացնողի հետ պայմանագրի առնչությամբ, օրինակ՝ հարցումների եւ բողոքների կարգավորման մասով հաղորդակցման համար հասանելի լեզվի(լեզուների) նշումը,
- անհրաժեշտության դեպքում՝ վեճերի՝ արտադատական կարգով լուծման հնարավորությունը:

Տեղեկությունների ստացման հաստատումը՝

Սպառողի ստորագրությունը՝

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՎԸ

Մաս 1.

<p>Պայմանագրի կողմ հանդիսացող՝ առետրային գործունեություն իրականացնողի (իրականացնողների) ինքնությունը, բնակության վայրը (գրանցման վայրը) եւ իրավական կարգավիճակը՝</p>
<p>Արտադրանքի համառոտ նկարագրությունը՝ Իրավունքի (իրավունքների) ճշգրիտ բնույթը եւ բովանդակությունը՝</p>
<p>Ճշգրիտ ժամանակահատվածը, որի ընթացքում կարող է իրացվել պայմանագրի առարկա հանդիսացող իրավունքը, եւ անհրաժեշտության դեպքում՝ դրա տեսողությունը՝ Այն օրը, երբ սպառողը կարող է սկսել իրացնել իր պայմանագրային իրավունքը՝</p>
<p>Փոխանակման անդամակցության վճարների համար սպառողի կողմից վճարման ենթակա գինը՝ Պայմանագրով սահմանված լրացուցիչ պարտադիր ծախսերի նկարագիրը, ծախսերի տեսակները եւ գումարների նշումը (օրինակ՝ երկարաձգման համար տուրքերը, պարբերաբար կատարվող այլ վճարներ, հատուկ գանձումները, տեղական հարկերը)՝</p>
<p>Սպառողին հասանելի հիմնական ծառայությունների ամփոփագիրը՝ Արդյո՞ք դրանք ներառված են վերոնշյալ ծախսերում: Եթե ոչ, ապա նշե՛ք, թե ինչ է ներառված, եւ որքան գումար պետք է վճարվի դրա դիմաց (ծախսերի տեսակները եւ գումարների չափի մասին նշումը, օրինակ՝ անհատական փոխանակման գործարքների դիմաց վճարման ենթակա գնի գնահատումը, ներառյալ՝ լրացուցիչ վճարումները)՝</p>
<p>Արդյո՞ք առետրային գործունեություն իրականացնողը ստորագրել է վարքագծի կանոնագիրքը (կանոնագրքերը), եւ եթե այո, ապա որտե՞ղ կարելի է դա (դրանք) գտնել:</p>

Մաս 2.

<p>Ընդհանուր տեղեկությունները.</p> <p>— սպառողն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության հրաժարվելու սույն պայմանագրի կատարումից պայմանագրի կամ որեւէ պարտադիր նախնական պայմանագրի կնքումից կամ այդ պայմանագրերն ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում, եթե այն ավելի ուշ է տեղի ունենում: Եթե փոխանակման պայմանագիրն առաջարկվում է միաժամանակ եւ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրի հետ միասին, ապա երկու պայմանագրերի նկատմամբ կիրառվում է պայմանագրի կատարումից հրաժարվելու միայն մեկ ժամանակահատված.</p>
--

- պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածում արգելվում է սպառողի կողմից որեւէ կանխավճարի կատարում: Արգելքը վերաբերում է ցանկացած վճարի, ներառյալ՝ վճարման, երաշխիքների տրամադրմանը, հաշիվների վրա գումարի պահպանմանը, պարտքի բացահայտ ճանաչմանը եւ այլն: Այն ներառում է ոչ միայն առետրային գործունեություն իրականացնողին, այլ նաեւ երրորդ կողմերին կատարվող վճարումը.
 - պայմանագրում նշված ծախսերից կամ պարտավորություններից բացի՝ սպառողը չի կրում որեւէ այլ ծախս կամ պարտավորություն.
 - միջազգային մասնավոր իրավունքի համաձայն՝ պայմանագիրը կարող է կարգավորվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության օրենսդրությամբ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր, եւ հնարավոր վեճերը կարող են ուղարկվել ոչ անդամ պետության, այլ մեկ ուրիշ՝ այն պետության այլ դատարաններ, որտեղ սպառողը բնակվում է կամ ունի մշտական բնակության վայր:
- Սպառողի ստորագրությունը՝

Մաս 3.

- Լրացուցիչ տեղեկություններ, որոնք ստանալու իրավունք ունի սպառողը, եւ տեղեկություն այն մասին, թե կոնկրետ որտեղ կարելի է դրանք ձեռք բերել (օրինակ՝ ընդհանուր բրոշյուրի որ գլխում), եթե ստորեւ ներկայացված չեն՝
1. **ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
 - բացատրություն այն մասին, թե ինչպես է աշխատում փոխանակման համակարգը, փոխանակման հնարավորություններն ու եղանակները, փոխանակման համակարգում սպառողի՝ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքին հատկացված արժեքի նշումը եւ փոխանակման կոնկրետ հնարավորությունների մի շարք օրինակներ.
 - հասանելի հանգստյան տների քանակի եւ փոխանակման համակարգում անդամների թվի նշումը, ներառյալ՝ սպառողի կողմից ընտրված հատուկ կացարանի հասանելիության մասով սահմանափակումները, օրինակ՝ պահանջարկի պիկ ժամանակաշրջանով պայմանավորված՝ նախապես՝ երկար ժամանակ առաջ ամրագրման հնարավոր անհրաժեշտությունը, եւ սպառողի կողմից փոխանակման համակարգում ներդրված տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքներից բխող ընտրության վերաբերյալ սահմանափակումների մասին նշումները:
 2. **ԳՈՒՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
 - գույքերի եւ նրանց գտնվելու վայրի հակիրճ եւ համապատասխան նկարագրությունը, եթե պայմանագիրը վերաբերում է անշարժ գույք չհանդիսացող այլ կացարանի, ապա՝ կացարանի եւ օբյեկտների համապատասխան նկարագրությունը, ինչպես նաեւ նկարագրություն այն մասին, թե որտեղից կարող է սպառողը հավելյալ տեղեկություններ ստանալ:
 3. **ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
 - տեղեկություններ առետրային գործունեություն իրականացնողի վրա դրված՝ նախքան փոխանակման կազմակերպումն առաջարկվող յուրաքանչյուր փոխանակման, ցանկացած լրացուցիչ այնպիսի վճարի մասին մանրամասներ

տրամադրելու պարտավորության մասին, որի համար սպառողը փոխանակման հետ կապված պատասխանատու է:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ պայմանագրերի գործողության դադարեցման մասով պայմանավորվածությունների եւ այդ դադարեցման հետեւանքների մասին տեղեկությունը.
- պայմանագրի գործողությունը դադարեցնելու պայմանները, դադարեցման հետեւանքները եւ այդ դադարեցման հետեւանքով առաջացող հնարավոր ցանկացած ծախս կրելու՝ սպառողի պարտավորության մասին տեղեկությունը:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- առետրային գործունեություն իրականացնողի հետ պայմանագրի առնչությամբ, օրինակ՝ հարցումների եւ բողոքների կարգավորման մասով հաղորդակցման համար հասանելի լեզվի(լեզուների) նշում.
- անհրաժեշտության դեպքում՝ վեճերի՝ արտադատական կարգով լուծման հնարավորություն:

Տեղեկությունների ստացման հաստատումը՝

Սպառողի ստորագրությունը՝

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՊԱՐԶԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՁԵՎԸ

<p>Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքը</p> <p>Սպառողն ունի սույն պայմանագրի կատարումից 14 օրացուցային օրվա ընթացքում հրաժարվելու իրավունք՝ առանց որեւէ պատճառաբանության:</p> <p>Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն սկսվում է (..... լրացվում է առետրային գործունեություն իրականացնողի կողմից նախքան ձեւը սպառողին տրամադրելը):</p> <p>Եթե սպառողը չի ստացել սույն ձեւը, ապա պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածն սկսվում է սպառողի կողմից այս ձեւն ստանալու պահից, սակայն ցանկացած պարագայում լրանում է մեկ տարի 14 օրացուցային օր հետո:</p> <p>Եթե սպառողը չի ստացել պահանջվող ամբողջ տեղեկությունը, ապա պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածն սկսվում է սպառողի կողմից այդ տեղեկությունն ստանալու պահից, սակայն ցանկացած պարագայում լրանում է երեք ամիս 14 օրացուցային օր հետո:</p> <p>Պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իրացնելու համար սպառողը ծանուցում է առետրային գործունեություն իրականացնողին ստորեւ նշված անվամբ եւ հասցեով՝ հուսալի կրիչի միջոցով (օրինակ՝ փոստով ուղարկված գրավոր նամակով, էլեկտրոնային փոստով): Սպառողը կարող է օգտագործել սույն ձեւը, սակայն դա պարտադիր չէ:</p> <p>Եթե սպառողն իրացնում է պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքը, ապա սպառողը պարտավորություն չի կրում որեւէ ծախսի համար:</p> <p>Ի լրումն պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքի՝ պայմանագրային իրավունքի ազգային կանոններով կարող են նախատեսվել սպառողի իրավունքներ, օրինակ՝ տեղեկություններ չտրամադրելու դեպքում՝ պայմանագրի գործողությունը դադարեցնելու իրավունք:</p> <p>Կանխավճարի արգելքը</p> <p>Պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամանակահատվածում արգելվում է սպառողի կողմից որեւէ կանխավճարի կատարում: Արգելքը վերաբերում է ցանկացած վճարի, ներառյալ՝ վճարման, երաշխիքների տրամադրմանը, հաշիվների վրա գումարի պահպանմանը, պարտքի բացահայտ ճանաչմանը եւ այլն:</p> <p>Այն ներառում է ոչ միայն առետրային գործունեություն իրականացնողին, այլ նաեւ երրորդ կողմերին կատարվող վճարումը:</p>
<p>Պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին ծանուցումը</p> <ul style="list-style-type: none"> — Ում՝ (առետրային գործունեություն իրականացնողի անունը (անվանումը) եւ հասցեն (իրավաբանական հասցեն)) (*)՝ — Ես (մենք) (**) սույնով ծանուցում եմ (ենք) պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին. — Պայմանագրի կնքման ամսաթիվը (*)՝ — Սպառողի (սպառողների) անունը (անունները)(***)՝

- Սպառողի (սպառողների) հասցեն (հասցեները)(**)
- Սպառողի (սպառողների) ստորագրությունը (ստորագրությունները) (միայն եթե սույն ձևի մասին ծանուցվում է թղթային եղանակով) (**)
- Ամսաթիվը (**)

(*) Լրացվում է առետրային գործունեություն իրականացնողի կողմից նախքան սպառողին ձեռք տրամադրելը:

(**) Հարկ եղած դեպքում ջնջել:

(***) Լրացվում է սպառողի (սպառողների) կողմից, եթե սույն ձեռն օգտագործվել է պայմանագրի կատարումից հրաժարվելու համար:

Տեղեկությունների ստացման հաստատումը՝

Սպառողի ստորագրությունը՝

ՀԱՎԵԼՎԱԾ VI

**ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԻ ԵՎ 94/47/ԵՀ ՀՐԱՀԱՆԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ**

ՀՐԱՀԱՆԳ 94/47/ԵՀ	Սույն հրահանգը
1-ին հոդված, առաջին պարբերություն	1(1) հոդված եւ 1(2) հոդված, առաջին ենթապարբերություն—
1-ին հոդված, երկրորդ պարբերություն	1(2) հոդված, երկրորդ ենթապարբերություն
1-ին հոդված, երրորդ պարբերություն	2(1)(ա) հոդված
2-րդ հոդված, առաջին պարբերությ	2(1)(բ) հոդված (նոր)
—	2(1)(գ) հոդված (նոր)
—	2(1)(դ) հոդված (նոր)
—	2(1) (ե) հոդված
2-րդ հոդված, երկրորդ պարբերությ	2(1)(զ) հոդված
2-րդ հոդված, երրորդ պարբերությ	2(1)(է) հոդված (նոր)
2-րդ հոդված, չորրորդ պարբերությ	2(1)(ը) հոդված (նոր)
—	2(1)(թ) հոդված (նոր)
—	2(1)(ժ) հոդված (նոր)
—	2(2) հոդված (նոր)
—	4(1) հոդված
—	5(2) հոդված
3(1) հոդված	3(1) հոդված
3(2) հոդված	3(2) հոդված (նոր)
3(3) հոդված	3(3) հոդված (նոր)
—	3(4) հոդված (նոր)
—	5(1) հոդված, առաջին ենթապարբերություն եւ 5(2) հոդված, առաջին ենթապարբերություն
—	
4-րդ հոդված, առաջին պարբերությ	4(3) հոդված եւ 5(1) հոդված
4-րդ հոդված, երկրորդ պարբերությ	4(2) հոդված (նոր)
—	5(4) հոդված (նոր)
—	5(5) հոդված (նոր)
—	6(1) հոդված
5(1) հոդված, առաջին նախադասություն	6(1) հոդված եւ 6(2) հոդված

ՀՐԱՀԱՆԳ 94/47/ԵՀ	Սույն հրահանգը
5(1) հոդված, առաջին պարբերույթ	6(3) հոդված եւ 6(4) հոդված
5(1) հոդված, երկրորդ պարբերույթ	6(3) հոդված
5(1) հոդված, երրորդ պարբերույթ —	6(5) հոդված (նոր)
5(2) հոդված	7-րդ հոդված
—	8(1) հոդված (նոր)
5(3) հոդված	8(2) հոդված
5(4) հոդված	8(2) հոդված
6-րդ հոդված	9(1) հոդված
—	9(2) հոդված (նոր)
—	10(1) հոդված (նոր)
—	10(2) հոդված (նոր)
—	11(1) հոդված (նոր)
7-րդ հոդված, 1-ին պարբերություն	11(2) հոդված
7-րդ հոդված, 2-րդ պարբերություն	11(3) հոդված
8-րդ հոդված	12(1) հոդված
9-րդ հոդված	12(2) հոդված
10-րդ հոդված	13-րդ եւ 15-րդ հոդվածներ
11-րդ հոդված	—
—	14(1) հոդված (նոր)
—	14(2) հոդված (նոր)
12-րդ հոդված	16-րդ հոդված
—	17-րդ հոդված (նոր)
—	18-րդ հոդված (նոր)
—	19-րդ հոդված (նոր)
13-րդ հոդված	20-րդ հոդված
Հավելված	Հավելված I
Հավելված, (ա) կետ	5(3)(ա) հոդված եւ հավելված I, 1-ին մաս, առաջին վանդակ
Հավելված, (բ) կետ	Հավելված I, 1-ին մաս, երրորդ վանդակ եւ Հավելված I, 3-րդ մաս, 1-ին կետ, առաջին պարբերույթ
Հավելված, (գ) կետ	Հավելված I, 1-ին մաս, երկրորդ վանդակ եւ Հավելված I, 3-րդ մաս, 2-րդ կետ, առաջին պարբերույթ
Հավելված, (դ)(1) կետ	Հավելված I, 3-րդ մաս, 3-րդ կետ, առաջին պարբերույթ

ՀՐԱՀԱՆԳ 94/47/ԵՀ	Սույն հրահանգը
Հավելված, (դ)(2) կետ	Հավելված I, 1-ին մաս, 4-րդ վանդակ եւ Հավելված I, 3-րդ մաս, 3-րդ կետ, երկրորդ պարբերույթ
Հավելված, (դ)(3) կետ	Հավելված I, 3-րդ մաս, 3-րդ կետ, երրորդ պարբերույթ
Հավելված, (դ)(4) կետ	Հավելված I, 3-րդ մաս, 3-րդ կետ, առաջին պարբերույթ
Հավելված, (դ)(5) կետ	Հավելված I, 3-րդ մաս, 3-րդ կետ, չորրորդ պարբերույթ
Հավելված, (ե) կետ	Հավելված I, 1-ին մաս, վեցերորդ վանդակ եւ Հավելված I, 3-րդ մաս, 2-րդ կետ, երկրորդ պարբերույթ
Հավելված, (զ) կետ	Հավելված I, 1-ին մաս, վեցերորդ վանդակ եւ Հավելված I, 3-րդ մաս, 2-րդ կետ, երրորդ պարբերույթ
Հավելված, (է) կետ	Հավելված I, 3-րդ մաս, 6-րդ կետ, առաջին պարբերույթ
Հավելված, (ը) կետ	Հավելված I, 1-ին մաս, չորրորդ վանդակ
Հավելված, (թ) կետ	Հավելված I, 1-ին մաս, հինգերորդ եւ վեցերորդ վանդակներ եւ Հավելված I, 3-րդ մաս, 4-րդ կետ, առաջին պարբերույթ
Հավելված, (ժ) կետ	Հավելված I, 2-րդ մաս, երրորդ պարբերույթ
Հավելված, (ժա) կետ	Հավելված I, 2-րդ մաս, յոթերորդ վանդակ, եւ Հավելված I, 3-րդ մաս, 6-րդ կետ, երկրորդ պարբերույթ
Հավելված, (ժբ) կետ	Հավելված I, 2-ին մաս, առաջին եւ երրորդ պարբերույթներ, Հավելված I, 3-րդ մաս, 5-րդ կետ, առաջին պարբերույթ եւ Հավելված V (նոր)
Հավելված, (ժգ) կետ	5(3) հոդված
—	Հավելված I, 1-ին մաս, ութերորդ վանդակ (նոր)
—	Հավելված I, 2-րդ մաս, երկրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելված I, 2-րդ մաս, չորրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելված I, 3-րդ մաս, 1-ին կետ, երկրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելված I, 3-րդ մաս, 4-րդ կետ, երկրորդ պարբերույթ (նոր)

ՀՐԱՀԱՆԳ 94/47/ԵՀ	Սույն հրահանգը
—	Հավելված I, 3-րդ մաս, 5-րդ կետ, երկրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելված I, 3-րդ մաս, 6-րդ կետ, երրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելված I, 3-րդ մաս, 6-րդ կետ, չորրորդ պարբերույթ (նոր)
—	Հավելվածներ II-V (նոր)